

ՅԵՂԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Կ Ի Պ Ր Ո Ս Ի Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ա Ց

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԱԶԳԱՏՈՂՄԻՆ

(Քաղաք 'ի ԴիԻԱնէն ՎԵՆԵՏԿԱՅ) :

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կիպրոսի պատմութեան կարևոր էջերէն մէկն կը բռնէ նաև Լուսինեան ցեղին պատմութիւնն, ինչպէս ամենայն ոք գիտէ, և աւելի կարևոր մեր ազգին համար, որ ազգախառնութեամբ միացած և հայացած կը ցուցնէ մեզ նոյն ցեղը: Լուսինեան տոհմն կ'առնու իր անունը համանուն պզտի գեղէ մը որ 'ի Բուադու Գաղղոյ: Կը սկսի 'ի Հիւկոսէ Ա, կոչեցելոյ Որսորդ, որ կ'ապրէր Ժ՛ դարուն մէջ: Լուսինեան ազգատոհմէն ծագեցան բազմաթիւ ճիւղք, Երուսաղեմի, Կիպրոսի և Հաստատանի թագաւորաց. Տիի, Վալանի, Լէզայի, Մարէի, Սէն-Վալերիի իշխանք. Անկուեմի, Ռոյֆուգոտի, Սէն-Ժըլէյի, Էյի կոմպ. Բէմպրոքի, Անգղոյ կոմպ, և այլն: Ի հմտոյ՞ որք Կիպրոսի պատմութեանն գրողք են, նշանաւորապէսն է կոմսն Մաս Լադրի, իր Կիպրոսի Պատմութեամբն և մանաւանդ բոլոր կենօք այն ճիւղին գրադերութիւնը: Այլպիսի քննութեանց և խուզարկութեանց առարկայ եղած է իրեն նաև Լուսինեանց թագաւորական տոհմին պատմութիւնն, որոց ճիւղագրութիւնն կը հրատարակեմք ըստ նոյն գիտնականին: Այս ճիւղագրութիւնն ոչ է պատմութիւն մը, այլ լոկ 'ի Գիւանէն Վենետից ջաղոտած և հաստատուն օրինակօք վկայեալ նոյն ցեղին շարքը կամ կարգը որդոց որդի, սկսեալ 'ի 1100ին վերջերէն մինչև 'ի 1400ին վերջերն, տեղ տեղ նաև մանր դատարկներով՝ զոր պատմութիւնն ցարդ չէ կրցած գտնել: Ահա մեր հրատարակածն այլ է թարգմանութիւնն այս գործոց, որ է՝ ծագմամբ փոքր ինչ միին և հիմա բոլորովին մարած ցեղի մը ճիւղագրութիւն:

ՀԻՒԿՈՍ Ը, կոչեցեալն Թուշի, որ յետոյ իւր ընտանեաց անդրանիկ որդոց ալ թողուց այս յորջորջումը, Բուադուի մէջ տէր եղաւ Լուսինեանի, և ոչ կոմս Մարշի, ինչպէս վրիպակաւ կը կոչէ զայն հեղինակն Երովանցիկ տոհմից՝ Վախճանեցաւ յԱսորիս իբրև յամի 1165: Իւր որդիքներէն կը յիշուին.

1. Հիւկոս Թ Լուսինեան, որ եղաւ Կոմս Մարշի:
2. Ժէօֆրուա Ա Լուսինեան, տէր Վուվանի և Մէրվանի, 'ի Բուադու, որ իր միւս եղբարց շատին պէս խաչակրութեան գնաց. 1188ին արդէն յԱսորիս էր: Կոմս անուանեցաւ Յոպպէի

(1194), այլ ոչ կոմս Կեսարիոյ: Ամուսնացաւ Էնոր (Oënor) Շագովուրի հետ, որ կ'ըսեն թէ էր առասպելեալն Մէլիզին, և հայր եղաւ Մեհաւառմն կոչեցեալ Ժէօֆրուաի Բ: Ժէօֆրուա Ա Ակուխտանիա դարձած էր 1197ին:

3. Ամաւրի, թագաւոր Կիպրոսի և Երուսաղեմի:
4. Կի, քազաւոր Երուսաղեմի, առաջին շառիկ իշխան Կիպրոսի:
5. Ռաուլ, կոմս Էօի:
6. Պետրոս:
7. Գուլիելմոս, կոչեցեալ տը Վալանս: Կը համարուէր թէ ինքն յամին 1186 յԱրևելս գայ: Այս նախատեսութեամբ իր եղբայրն Կի թագաւորը կը

1 Familles d'Outremer.

Հանար ամուսնութիւն մը դաշնադրել
Եղեակոյ կոմսին՝ Ժորժէնի Գ՝ աղջիկ-
ներէն մէկուն հետ. բայց առաջարկն ՚ի
դերու ելաւ :

1192. ԿԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ, որդի Հիւ-
կոսի Ը, տէր Լուսինեանի, Յուպպէի և
Աւսլաղոնի կոմսութիւնն ընդունեցաւ
1180ին, ամուսնանալով ընդ Սիպիլայ
Երուսաղեմի իր կնոջ հետ Երուսա-
ղեմի քաղաշտր պատկուեցաւ յամին
1186, կորսնցուց յետոյ իր գահը յա-
մին 1192. նոյն տարին իշխան կիս-
րուսի եղաւ, Անգղիոյ թագաւորէն գը-
նելով զլիզլին, և մեռաւ 1194ին ապրի-
մի մէջ :

Կիև, յամին 1180, Չատկի տօներուն,
Սիպիլ զուտոր Ամաւրեայ Ա Երուսա-
ղեմի թագաւորին և Ազնէս Գուրտը-
նէի, այրի մնացեալ ՚ի Գուլիէլմոսէ Մոն-
ֆէրրազնոյ, ուսկից ունեցած էր զիշ-
խանն Պալտուին Ե, որ թագաւոր ե-
ղաւ Երուսաղեմի 1185ին: Սիպիլ իր որ-
դոյն մահուանէն վերջը ինքն ալ թա-
գուհի ըլլալով՝ իր որդիներէն աւելի
երկարակեաց եղաւ և մեռաւ 1190
տարւոյն կէսերուն :

Որդիք. 1. և 2. Ալիծ և Մարիամ,
երկուքն ալ վախճանեալ իրենց մօրը
մեռած եղանակին մէջ, բայց ըստ շա-
րունակողի Գուլիէլմոսի տիրացւոյ,
նախ քան զնա: — 3 և 4. Ռուրիչ երկու
դասերք ալ նոյնպէս իրենց մօրմէն
առաջ վախճանեցան :

1194. ԱՄԱՒԻԻ ԼՈՒՍԻՆԵԱՆ կամ Ա-
մաշրի Բ, որդի Հիւկոսի Ը Լուսինեան,
զունդատապլ Երուսաղեմի, կոմս Յուպ-
պէի յամին 1193, իր կի եղբօրը կը
յաջորդէ՝ Կիպրոսի իշխանուքեան՝
յամսեան ապրիլի 1194, և կը պսակուի
քաղաշտր կիպրոսի ՚ի 1197, քաղա-
շտր Երուսաղեմի կը ճանչցուի 1198ին
և կը մեռնի ՚ի Ս. Յովհաննէս յԱբբեա,
ապրիլ 1205: Ի 1197էն ՚ի վեր սահ-
մանուեր էր որ իւր երեք որդիքն ա-
մուսնանան ընդ երիս դասերս Հենրի-
կոսի Բ Շամբանիոյ կոմսին և իզապել

Երուսաղեմի թագուհւոյն, որք էին,
Մարիամ, Ալիծ և Ֆիլիպպինա: Մա-
րեմայ վաղաժաման մահուամբ, որ էր
անդրանիկ Հենրիկոսի Շամբանիոյ զըս-
տերաց մէջ, ինչպէս նաև մահուամբ
Ամաւրեայ երիցագունին երկուց որ-
դոյց կիի և Յովհաննու, առաջադրեալ
ամուսնութիւններէն մէկը միայն կա-
տարուեցաւ, այսինքն Հիւկոսի ընդ Ա-
լիծի Շամբանեայ:

Աւաշիկն Կիև. Էլիվ տ'իպըլէն, զուս-
տըր Պալտուինի տ'իպըլէն, իշխանին
Հուամայ, ուսկից ունեցաւ երեք ուստր
և երեք գուտոր:

Որդիք. 1. Կի, անդրանիկ որդի,
վախճանեալ նախ քան զ1205, որ պի-
տի ունենար Սենեսյալ կիպրոսի տիտ-
ղոսը, ըստ Բ. Լուսինեանի:

2. Յովհաննէս, վախճանեալ նախ
քան զ1205:

3. Հիւկոս Ա, թագաւոր կիպրոսի:

4. Պուրկոնեը, զոր ժամանակակից
պատմագիրք կը շփոթեն ընդ գասեր
Իսահակ Կոմնենոսի, նախնի իշխանին
կիպրոսի, և վրիպակաւ՝ ամուսնացեալ
կը համարին ընդ Ռայիմոնտի Զ, կոմսի
Տրոյվսայ: Պուրկոնեը հարսնացաւ Կո-
դէի Մոնպէլիարի, որդւոյ Ամետի տը
Մոնֆօգոն, որ թագապահ եղաւ Կի-
պրոսի իր աներձաղին Հիւկոսի Ա տղա-
յութեան միջոց, յամին 1205 — 1210,
որ մեռաւ 1214ին ժամանակները:
Պուրկոնեը ունեցաւ, Էլիվ տը Մոնպէ-
լիար, նախ կին ժեբարի տը Մոնդէ-
կիւ, թոռն Եւսդորգիոսի Նիկոսիոյ արք-
եպիսկոպոսին: յետոյ կին Պալիանի
Գ, Պէյրութի տիրոջ. այս ամուսնութիւ-
նը նախ արգիլուեցաւ Նիկոսիոյ արք-
եպիսկոպոսին ազգականութեան պատ-
ճառաւ, սակայն յետոյ վաւերացաւ
Գրիգորի Թ հրամանով մը:

5. Ալիծ, վախճանեալ ՚ի բորոտու-
թենէ ՚ի տղայութեան:

6. Էլյոյիզ, հարսնացեալ նախ Էտի
տը Տամբիէր, յետոյ 1210ին ժամա-
նակները՝ Ռայիմոնտ Ռուբենի, կոչե-
ցեալ իշխան Ռուքէն, կոմս Տրապո-
լոյ, թոռն Հայոց թագաւորին, որ յա-

փրշտակեց զայն յԷօտէ տը Տամբիէր որուն հետ միայն իբրև թէ խօսեցեալ ըլլար: Ծնաւ զՄարիամ, ժառանգ իշխանութեանց Տորոսի և երկուց Գարաքաց կամ Մոնրէալի, զոր յետոյ պաշտատակաւ տարաւ 1240ին ֆիլիպպոլսի տը Մոնֆոր, որ տէր եղեր էր Տիւրոսի 1243ին:

Երկիրորդ կիև, 'ի 1198, իղապել Ա, թագուհի Երուսաղեմի, ուսկից ունեցաւ որդի մը և երեք դստերք, Ամաւրի, Մեխիսանտ և Սիպիլ:

Որդիք, 1. Ամաւրի, զոր Գուլիէլմոսի տիւրացւոյ շարունակողը իր ազայ տարիքին համար Ամաւրիկ կը կոչէ: Ըստ տարեգրիս, Ամաւրի ապրեցաւ իր հօրը մահուընէն վերջն ալ, և վախճանեցաւ քիչ ետքը. բայց ըստ շարունակող զի Ռուպիկի տիւ Մոն, ինչպէս կ'ըսէ նաև Դիյլըմոն, հաւանականաբար մեռած է Տեառնընդառաջին (2 փետր. 1205) որով և իր հօրմէն քիչ ամիս առաջ:

2. Մեխիսանտ, որ հարսնացաւ 1218ին Միսակաևի կոչեցեալ Պեմունդի Գ. իշխանին Անտիոքայ: Ի 1249, ինչ նովկենտիոս Գ իւր իրաւունքներն անցուց Երուսաղեմի պայլութեան, իւր ամեն քոյրերէն աւելի ապրեցաւ: Թեբևս 1258ին մեռած էր. բայց յայտնի է որ 1269ին չէր ապրեր: Ծնաւ զԷլոյիզ և զօրիորդն Մարիամ Անտիոքայ, որ յետ մրցելու Երուսաղեմի գահուն թագապահութեան համար, իր Հիւկ Գ. թոռնիկին հետ, որ թագաւոր եղեր էր կիպրոսի 1267ին, իր Երուսաղեմի գահուն պահանջներն անցուց կարողոս տ' Անժուի, որ անմիջապէս գրաւել տուաւ Աքքեայի դղեակը: Ասկէ է այն բացարձակապէս հերքելի իրաւունքը, զոր նաբոլիի տունը կարծեց ունենալ Երուսաղեմի թագին վըրայ, ընդդէմ կիպրոսի Լուսիննան ցեղին:

3. Սիպիլ կամ Զապել, կին Լեոնի Բ, կոչեցեալ Մեճն, Հայոց թագաւորին, որուն հետ ամուսնացաւ 'ի կիպրոս յամին 1210:

1205. ՀԻՒԿ Ա ԼՈՒՍՄԱԵԱՆ, թագաւոր կիպրոսի, որդի Ամաւրեայ Լուսիննան և Էլիփի տ' Իպրլէն, ծնեալ յամին 1195, վախճանեալ յամսեան փետրուարի կամ մարտի, 1218, երեք որդի թողով յիւր կնոջէն Մարիամ, Հենրիկոս Ա իւր յաջորդը, և իղապել: Կիև, յամին 1208 մինչ տակաւին նոր 13 տարին լրացուցեր էր, և անաւագ Ալիծ Շամբանեայ, որ գրեթէ նոյն տարիքն ունէր, երկրորդ դուստր Հենրիկոսի Բ, կոմս Շամբանեայ տէր թագաւորութեան Երուսաղեմի և իղապելի յերուսաղեմէ, դուստր Ամաւրեայ Ա. — Ալիծ իւր հօրեղբարց հետ վէճեր ունենալով՝ իւր որդւոյն թագապահութեան առթիւ, քայտեցաւ յԱսորիս և վերստին ամուսնացաւ, նախ 1223ին միլոցները ընդ Պեմունդի Անտիոքայ, անդրանիկ որդւոյ և ժառանգի Պեմունդի Գ. Ա. յամուսնութիւնը խզեցաւ ազգականութեան պատճառաւ և կամօք երկուց ամուսնաց յամին 1228, դեռ Պեմունդ իւր հօրը չյաջորդած: Ալիծ յետոյ Գաղղիա եկաւ, ուր պարոնները զինքը իբրև գործիք մը ձեռք առին ընդդէմ կոմսին Շամբանեայ: Յամին 1229 Պրըզանեի կոմսը Պետրոս Մօզլէր, զինքը կնութեան ինչորեց: Յամին 1234 Շամբանեայ կոմսին հետ յարմարցուց իւր իրաւանց խնդիրներն 'ի վերայ կոմսութեան և 1235ին նորէն դարձաւ յԱրևելս, ուր ամուսնացաւ 1241ին միլոցներն ընդ Ռաուլի տը Սուասոն, տէր Գեօփրի, երկրորդ որդի Սուասոնի կոմսին: Յամին 1243 ասպետք Ռաուլի և Ալիծի յանձնեցին Երուսաղեմի թագապահութիւնը, որոնք կրցան կայսերականքը արտօքսել յԱսորոց: Քիչ վերջը վչտանալով բարձրագոյն ատենին ըրած որոյցութեան մը վրայ իր անձին նկատմամբ, Ռաուլ թողուց զԱսորիս, ուր մնաց Ալիծ թագաւորին, և հոն մեռաւ 1246ին, ինչպէս կը կարծուի առանց ժառանգ մը թողլու յետին երկու ամուսնութիւններէն:

Որդիք. — 1. Մարիամ, կոչեցեալ կոմսուհի Մարիամ, անդրանիկ Հիւ-

կոսի Ա և Ալիծի Շամբանեայ որդւոյ մէջ. « Ես որդի եմ կոմսուհւոյն Մարեմայ, որ նախածին էր քան քու մայրդ և անդրանիկ յորդիս նախնոյն մերոյ Հենրիկոս թագաւորին »: այս պատասխանը տուեր է Հիւկոս տը Պրիէն, որդի Մարեմայ, երբ 1264ին իր մօրաքեռորդոյն, Հիւկոս Անտիոքայ հետ կը վիճէր Երուսաղեմի թագապահութեան վրայ: — Մարիամ 1233ին ամուսնացաւ ընդ կողիէի Գ, կոչեցեալ Մեճն, կոմսին Պրիէնի, որ այն միջոցներուն կամ եղբր էր Յոպպէի, թոռն արքային Յովհաննէս տը Պրիէն, որ գերի բռնուեր էր յանյաջող պատերազմին Գազայ ընդդէմ խորազմեանց յամին 1244, և վախճանեցաւ քիչ վերջը: — Մարիամ Լուսինեան տակաւին կ'ապրէր յամին 1247, մեռաւ իր եղբորէն՝ Հենրիկոս թագաւորէն առաջ, և հետեւաբար շատ առաջ քան զիւր քոյրը իղապելլա:

Իւր յաջորդութիւնը գիտնալ ուզողք փնտռեն կոմսք Պրիէնի 'ի Գազղիա, կոմսք Լէյլէի յիտալիա, և Դուքսք Արենայ 'ի Պեղոպոնէս գրոց մէջ:

2. Հենրիկոս Ա, թագաւոր կիպրոսի, ծն. յամին 1217:

3. իղապել Լուսինեան, ծնեալ նախ քան զամս 1218, կին Հենրիկոսի Անտիոքայ, կոչեցեալ իշխան Հենրիկոս, որդի Պեմունդի Գ Անտիոքայ, չառաւիղ երկրորդ ցեղի կիպրոսի թագաւորաց, յորոց Հիւկոս Գ Անտիոքայ-Լուսինեան յամին 1267 'ի բազամբարձեր էր, որ էր որդի իղապելի և Հենրիկոսի: այս ամուսնութիւնը առաջարկեալ 1227էն 'ի վեր, ինչ որ կը տեսնուի՝ կատարուեր էր 1233ին միջոցները: — Յամին 1257 իղապել և Հենրիկոս, որ այն ատեն 'ի Նիկոսիա էր, կը հաստատեն Շամբանեայ երկիրներուն վերաբերեալ իրենց մօրը երբեմն ըրած դաշինքներն: իղապել մեռաւ յամին 1264:

1218. ՀՆԵՐԻԿՈՍ Ա ԼՈՒՍԻՆԵԱՆ,

թագաւոր կիպրոսի, որդի Հիւկոսի Ա և Ալիծի Շամբանեայ, մականուանեալն Յոյր, ծնեալ յ3 մայիսի 1217, յաջորդեց հօրը 'ի փետրուարի յամին 1218, ընդ խնամակալութեամբ իւր մօրն և մօրեղբօրն որ էր ֆիլիպպոս տ'իպլէն: Ինչպէս իւր յաջորդը, միայն տէր թագաւորութեան Երուսաղեմի տիրողոսն առաւ: Յամին 1227ին պսակուելով թագաւոր նախ քան յարունս հասնիլը, մեռաւ 'ի Նիկոսիա 'ի 18 յունուարի յամին 1253:

Առայլևս կիւն, 'ի մայիսի 1229 'ի Լիմասոյ, Ալիծ տը Մոնֆէրրազ, դուստր Դուլիէլմոսի Գ, մարգէզ 'ի Մոնֆէրրազի, թոռնեակ Գոնրատոսի տը Մոնֆէրրազ, իշխանին Տիւրոսի, վախճանեցաւ անզաւակ Սէրինի պաշարման ժամանակ, 'ի վերջ կոյս 1132ի կամ 'ի սկիզբն 1233ի:

Երկրորդ կիւն, անշուշտ 1237 տարիէն 'ի վեր, վասն զի այս թուականիս Գրիգոր Թ՛ նամակ մը կը գրէ առ թագաւորն և առ թագուհին կիպրոսի, Ստեփանիա կամ Էսդէֆանի 'ի Լամբրոնէ, դուստր Լամբրոնի կոստանդին մեծ պարոնին, քոյր Հեթմայ կամ Հայիթմոսի Ա, արքային Հայոց յամէ 1226 և Սմբատայ պատմագրի: Սմբատ գրեց 'ի Սմրզանտէ, յ7 փետրուարի 1247 կամ 1248, առ թագաւորն կիպրոսի՝ քեռայր իւր, և առ իւր քոյրը Ստեփանի, մեծայարգ նամակ մը, զոր մեզ աւանդած է վէնսան տը Պովէ: Յամին 1249 ապրիլ 1 տակաւին կ'ապրէր Ստեփանի, բայց հիւանդ էր 'ի Նիկոսիա: Քիչ վերջը վախճանեալ կը համարուի անզաւակ:

Երրորդ կիւն, 'ի սեպտեմբերի 1250 ամին, փլէզանս Անտիոքայ, դուստր Պեմունդի Ե, իշխանին Անտիոքայ և Լուսիայ՝ Սինիայ կոմսից 'ի հոռովէական ընտանեաց, փլէզանս այրի մնալով, կարգուեցաւ 1254ի Չատկի միջոցներն (12 ապրիլ), Ս. Լուդովիկոսի Սուրբ երկիրներէն չմեկնած, ընդ Պալեսին Ա տ'իպլէն, տէր Արսուրի, զոր Ս. Լուդովիկոս ասպետ կարգեր էր

Չատկին օրերն , որ էր որդի Յովհաննու տ'իպըլէն , թագապահի Երուսաղեմի յանուն կիպրոսի թագաւորին :

Չգիտցուիր որ արդեօք նշանտուք միայն թէ իրք ամուսնութիւն եղաւ ընդ թագուհին կիպրոսի և ընդ Պալեան տ'իպըլէն : Եամին 1255 օգոստոսի 28ին Աղեքսանդր Դ կը հրամայէ Նիկոսիոյ արքեպիսկոպոսին բառնալ այդ միութիւնը ազգակցութեան պատճառաւ . և Գուլիէլմոսի տիւրացոյ շարունակողը կը պատմէ , ինչպէս նաև Սաւուտոյ , որ երկու ամուսինք 1258ին փոփոխակի ետ աւին իրենց խոստմունքն : Ետ հաւանական է որ միայն նշանտուք եղած ըլլայ և ամուսնութիւնը կատարուած չըլլայ : — Փլէզանս մեռաւ 1261ի սեպտեմբեր 22ին , իսկ հետևեալ 27ին Ամատի :

Որդիք . Հիւկոս Բ , որ է հետևեալն :

1253 . ՀԻՒԿՈՍ Բ ԼՈՒՍՄԵԾԱՆ , թագաւոր կիպրոսի , տէր թագաւորութեան Երուսաղեմի , որդի Հենրիկոսի Ա և փլէզանսի Անտիօքայ , իր հօրը մահուանէն քիչ ամիս առաջ ծնած , որ իւր հօրը յաջորդեց ընդ թագապահութեամբ իւր մօրը : Մեռաւ անզաւակ 'ի Նիկոսիա , 1267 , զեկտեմբերի 5ին , Ս . Նիկողայոսի տօնին նախընթաց օրը :

Կիև , յամին 1265 կամ 1266 , իզապել տ'իպըլէն , դուստր և ժառանգ Յովհաննու Բ տ'իպըլէն , Պէյրութի տիրոյ : իզապել Պէյրութի տէրութիւնն իւր երեք ամուսնաց պաշտատական տարաւ , որոց հետ ամուսնացաւ յետ մահու Հիւկոսի առանց զաւակ մ'ունենալու , և էին , Ռայիմոնտ Օտարն (l'Étranger) , Նիկողայոս Ալբան կեսարիոյ և Գուլիէլմոս Պարլաս : իզապել մեռաւ յետ 1277ին , թողլով Պէյրութի իշխանութիւնը իւր էլիվ քրոյր , որով թէ այն տիտղոսը և թէ կալուածը անցաւ Մանֆորի ընտանեաց :

1267 . ՀԻՒԿՈՍ Գ ԱՆՏԻՈՒԲԱՅ-ԼՈՒՍՄԵՑ

ՄԻՆԵԱՆ , թագաւոր կիպրոսի և Երուսաղեմի , որդի Հենրիկոսի յԱնտիօքայ , կոչեցեալ իշխան Հենրիկոս (որդի Պեմունդի Դ) և իզապելլայ Լուսինեան դուստր արքային Հիւկոսի Ա , որուն անունը կրեց իբրև ժառանգ իրեն տանը , թողլով իւր հայրենական անունը : Արդէն 1264էն 'ի վեր թագապահ Երուսաղեմի թագաւորութեան , յաջորդեց իր հօրեղբորդուդն Հիւկոսի , կիպրոսի գահուն վրայ 1267ի տարուոյն վերջերն . 1268ին ապրիլի միջոցները Ս . Յովհաննու Աքքեայ Բարձրագոյն Ատենէն թագաւոր հռչակեցաւ Երուսաղեմի , մինչ տակաւին կենդանի էր Գոնրատինոս , թէպէտ և մեծապէս կ'ընդդիմանար իւր հօրաքոյրը Մարիամ' Անտիօքայ : Մեռաւ 'ի Տիւրոս 1284ին մարտի 26ի :

Կիև , իզապել տ'իպըլէն , դուստր կիի տ'իպըլէն , գունդստապլի կիպրոսի , հինգերորդ որդի Պէյրութի Յովհաննէս տ'իպըլէն երեց իշխանին : Իզապել մեռաւ 1324ին 2 յունիսի , և թաղեցաւ 'ի Ս . Փրանկիսկոս Նիկոսիոյ , առ ոտս իւր որդւոյն Հենրիկոսի Բ : Ունեցաւ 10 կամ 11 որդիք . վեց դուստր , Յովհաննէս , Պեմունդ , Հենրիկոս , Ամալրի , Կի , Գամբերն , և չորս կամ հինգ դուստր , Մարիամ , Մարգարիտա , Ալիծ , Էլցիլզ և թերևս ուրիշ դուստր մ'ալ իզապել :

Որդիք . 1 . Յովհաննէս Ա , թագաւոր կիպրոսի , որ է հետևեալն ,

2 . Պեմունդ , որ ըստ Բ . Լուսինեանի , զոմինիկեան կրօնաւորաց կարգը մտաւ նախ , յետոյ յաշխարհ գառնալով՝ կրեց իշխան Գալիլիոյ տիտղոսն . մեռաւ 3 նոյեմբերի 1283ի , իւր հօրը կենդանութեան ժամանակ :

3 . Հենրիկոս Բ , թագաւոր կիպրոսի ,

4 . Ամալրի , իշխան Տիւրոսի , վարիչ թագաւորութեան կիպրոսի , որուն ճիւղագրութիւնը կը զննէք 'ի ստորև 'ի ծանօթութեան * :

* Տես աստեղանդէ ծանօթութիւնն 'ի յաջորդ էջն :

5. Կի, Հինգերորդ որդի Հիւկոսի Գ, կոչեցեալ գունդստապլ: Յամին 1285 իր Հենրիկոս Բ եղբոր զահ ելլելովը, ինքը կիպրոսի գունդստապլ կոչուեցաւ, և այսպէս յիշուած է նաև 1292ի մայիս 17ին, և միուաւ 1302ին կամ 1303ին, թողով երկու զուակ, արու մ'երեքամեայ, որ յետոյ եղաւ Հիւկոս Գ թագաւորն, և դուստր մի իղապել, զորս երկուքն ալ ունեցեր էր յիւր կնոջէն յիշիվէ տ'իպըլէն, տիրուհւոյ Պէյրու-թի, թուռն կիի Ա տը լա Ռոյ, հորաքեռ որդի զքսից Աթենայ, կողիէ տը Պրիէն և կիի տը լա Ռոյ, որոյ հետ վիճեցաւ զքսուեթեան համար 1309ին:

Իղապել Լուսինեան, դուստր կիի և Էլիվի, ամուսնութեան խնդրեց Միքայէլ Փալէոլոգ, որդի Անգրոնիկոսի Գ: Կիպրոսի թագաւորն ըսած ըլլալով որ առանց հաւանութեան քահանայապետին չէր յանձն առնուր այս ամուսնութիւնը, նուիրակք թողուցին զկղզին առանց քահանայապետին պատասխանին սպասելու: Իղապել ամուսնացաւ ընդ էօտի տը Տամբիէրի, գունդստապլի

* Յեզարանորիս Ամասրեալ Լուսինեան, իշխանիկ Տիրոսի:

ԱՄԵՐԵՐ, չորրորդ որդի արքային Հիւկոսի Գ Ամասրեալ Լուսինեան և իղապելի տ'իպըլէն, եղբայր արքային Հենրիկոսի Բ, իշխան Տիրոսի տիրոջան ստացաւ: Այսպէս կոչուած է 1288էն 'ի վեր, և 1292ին կը մտուի իբրև Տիր Տիրոսի: Յամին 1306 օգնութիւն գտնելով շատ մը ապստաներէ և իւր եղբայրներէն, ձեռք կ'առնու իշխանութիւնը և զթագաւորը կ'աքորէ 'ի Հայաստան: Ան ատեն ստացաւ իշխան Տիրոսի, վարիչ քաղաքապետին կիպրոսի տիրոջաները: Ապանուեցաւ 'ի Սեմուն Մանշոյիֆէ 1310ին յունիսի ծին:

Կիև, յամին 1295, իղապել Հացաստանի, զոր Հաք Չապել կը կոչեն կամ Չապրուն, դուստր Լուսի Գ, արքային Հայոց: Իղապել 1323ին վախճուած էր: Բայց 'ի գանազան երկիրներէ, ստացեր էր նաև 'ի Կիպրոս Գրիգորուց և Ստամպոլու գիւղերը:

Որդիք, 1. Հիւկոս**, որուն վրայ ստոյգ տեղեկութիւն մը չունինք: Բ. Լուսինեան առանց խորին քննութեան, կը համարի որ ինքը եղած ըլլալ Լուսինեան ցեղէն Հայոց առաջին թագաւորն և իրեն երևակայեալ ցեղաբանութիւն մը կը զնէ: — 2. Հենրիկոս, վախճանուել 'ի քան-

երուսաղեմի: Ինքն է, Հաւատարիմ և սիրեցեալ քոյրը, իզապոյ Լուսինեան, գունդստապլուհի Երուսաղեմի քաղաքապետը, և իւր ամուսինն, հաւատարիմ և ազնուական եղբայր էօտ տը Տամբիէր, և այլն, որք յիշատակուած են իրենց եղբոր Հենրիկոսի Գ գիււանական յօդուածոց մէջ: Հաւանականաբար այս իղապելի համար է Մայրքի իշխանագինին (յամին 1340) յիշատակագրոց մէջ այն մասը, յորում իշխանը կը պատմէ իւր կնոջ իշիվի առ իւր հօլաքոյրը սուած այցելութիւնն, որ էր քոյր Հիւկոսի արքային, քիչ առաջ 'ի տղաբերս 'ի Գլոռա գիւղ մերձ 'ի Տամակոստա:

6. Այսէրի, կոչեցեալ Գամբրէն, որ գունդստապլ անուանեցաւ իր կի եղբորը մահունէն վերջը յամին 1302 կամ 1303, յիշուած յամին 1306 իբր սպարապետ քաղաքապետին կիպրոսի: Ոխերիմ թշնամի եղաւ իւր եղբոր Հենրիկոսի Բ, որ 1310ին առաւ իրմէ գունդստապլութիւնը: Յետոյ նորէն իրեն դարձուց թագաւորը այս պատիւը,

տի 'ի Միտ, իւր մօր հետ: — 3. Կի, կոչուող ըստ Հայոց, որ քաղաքը Հայոց հոչակուեցաւ յետ սպանութեան արքային Յովհաննու կամ կոստանդնոյ Գ, իր եղբորն, և սպանեալ իբրև զնա, յետ երկու տարի թագաւորութեան: — 4. Յովհաննու կամ Ճիւան, որ Հայոց քաղաքը ընտրուելով 1342ին կոստանդին Գ անուամբ, տարի մը թագաւորելէն վերջը մեծամեծներէն սպանուեցաւ: Գուստր մը թողուց, Մարգարիտա Լուսինեան, կին Մանուելի կանգաւորէնի, տիրոջ Մորէպի կամ Միաքայ, որուց կանգաւորէն Յովհաննու կայսր, վախճանելոյ ըստ 2օրիքի 1380ին մարտի 25ին: Ըստ Ղևնդիոսի Մագերայ և Սղրամյալտի, որոնք միայն մեզ ծանօթացուցած են Տիրոսի իշխանի այս թրուռնիկն անունը, Մարգարիտա Լուսինեան, Կիպրոս գալով 1372ին իւր սեպալան կան ցեկանաւոր, Պերոսի Բ թագաւորութեան հանդիպց ներկայ գտնուելու, այն ժամանակէն հօս մնաց կամ վերջը նորէն հօս դարձաւ: Տարուէ տարի 1,000 տուգաղ կ'ընդունէր Կիպրոսէն, որ եկամուտ էր Արափորքոյ գեղին և իւր պապէն ժառանգած ուրիշ կայուածոց: — 5. Պեմանդ: — 6. Մարիամ կամ Ագնէս, որ ամուսնացաւ իւր մօրեղբոր որդւոյն Լուսի Գ Հաւոց քաղաքապետին հետ, որ էր որդի Թորոսի և Ալլիգեպ Լուսինեան:

Հնգ:

** Մ. Թորոսի. Սա է ըստ Հայոց Պարսն Ուէ կամ

հաւանականաբար յետ դարձին յաբսորանաց 'ի Հայաստան : Յամին 1316 ապրիլ 19ին, Պետրոս Դեղին՝ Յամակոստ հասնելով, բնց քիչ առաջ աւնոր վախճանիլը : Մէսսորէայի մէջ գններ էր Սղէֆանովազիլի գիւղը :

7. Մարիամ՝ քաղառնի Արակունի, երրորդ կին Յակովբայ Բ, Արակունի թագաւորին, որուն էլէնոորա Անգղիոյ և Պլանչ Անժուի կանայքը մեռեր էին : — Յամին 1314, Հիւկոս Պէտուէն՝ եպիսկոպոս Լիմասոյի, և Ամարի, յետոյ եպիսկոպոս Պափոսի, Հներիկոսէն Բ յԱրակունի դրկուեցան այս միութեան վրայ խօսելու համար : Ամուսնութիւնը դաշնադրեցաւ գործակատարաց ձեռքով 'ի Նիկոսիա 1315ին յունիսի 15ին : Բիչ վերջը մեկնեցաւ Մարիամ և հասաւ 'ի Բալբերմոյ սեպտեմբեր 5ին 1315ի : Պետրոս Դեղին, որ իրեն ընկերեր էր յԱրակունի, 1316ի ապրիլի 19ին դարձեր էր 'ի Կիպրոս : — Մարիամ Լուսինեան իր կտակը ըրաւ 'ի Դորգոպա 1319ին, ապրիլ 2ին : Մեռաւ այս քաղքիս մէջ ապրիլի կէսերը, և իր վախճանաց համեմատ թաղուեցաւ Ս. Գովինիկոսի կրօնաւորաց եկեղեցւոյն մէջ, որ հիմայ կործանած է : Անոր համար կը տարակուսիմ այն արձանագրութեան վրայ՝ զոր կարգացեր եմ Պարցելունայի դիւանաց հաւաքածոյից մէջ, ուսկից այնպէս կը հասկըցուի որ Մարիամ թագուհին մեռած ըլլայ 'ի Պարցելունա յ2 նոյեմբ. 1322, և թաղուած ըլլայ այս քաղքիս փրանկիակեանց եկեղեցւոյն մէջ, թէպէտ և Ուատարինկ այս կարծիքը ընդունելի կը համարի : Ըստ Տարեգրոց Կրտսեր եղբարց, Մարիամ Լուսինեան և էլէնոորա Արակունի երկու թագուհիները, յետինս կին Պետրոսի Ա Լուսինեան, թաղուած պէտք են ըլլալ փրանկիակեանց նոյն եկեղեցւոյն մէջ 'ի Պարցելունա :

8. Մարգարիտա, քաղառնի Հայաւ

1 Մ. Թարգմ. Հեթում Բ կուսակոնս ապրեցաւ : Մարգարիտա՝ անոր եղբոր Թորոսի Գ հետ պատկուեցաւ յամին 1287 :

առաւելի : Ամուսնացաւ չգիտցուիր երբ՝, Հեթմոյ Բ հետ որ 1289ին Հայոց թագաւոր եղաւ, և հրաժարեցաւ 1305ին 'ի նպաստ իւր թոռանը Լևոնի Գ, յետոյ փրանկիակեան կրօնաւորի սքեմը զգեցաւ եղբայր Յովհաննէս կոչուելով, և սպաննուեցաւ 1307ին : — Յամին 1286 մայիս 23ին Հոսովմայ արքունիքը հրաման տուեր էր ամուսնութեան մը ընդ միոյն 'ի դստերաց Հիւկոսի Գ Կիպրոսի, Հայոց թագաւորին որդւոց մէկուն հետ : — Մարգարիտա 1324ին մեռեր էր երբ թագաւորութեան հասաւ իր թոռը Հիւկոս Գ :

9. Ալիժ, կին Պայիանի տ'իպլէն, իշխան Գալիլիոյ, տէր Տիբերիոյ յԱտորիս, տէր Մորֆոյի և Ակակիոյ 'ի Կիպրոս իւր ամուսինը, ռիւերիմ թշնամի Հենրիկոս Բ արքային, Կերինիոյ այրերուն մէջ բանտուեցաւ ու մեռաւ անօթու թենէ 1316ին միջոցները : Ալիժ 1324ին կ'ապրէր իր եղբորը Հներիկոսի Բ մեռած ժամանակը : Իւր թոռան Հներիկոսի Գ իշխանական յօգուածոց մէջ կոչուած է : Մեր ազնիւ և սիրեցեալ հորաքոյրը Աաչիս, իշխանունի Գալիլիոյ և տիրուռնի Տիբերիոյ : — Ունիւք իրմէ նամակ մը ուղղեալ առ իւր աները Յակոբ Բ արքայ Արակունի 1316ին կամ 1322ին, յորում ինքզինքը կ'անուանէ Աաչիս Լուսինեան, իշխանունի Գալիլիոյ և տիրուռնի Տիբերիոյ, քոյր Չեր, աղջոյն : — Գալիլիոյ իշխանուհին, հորաքոյր Հներիկոսի Գ արքային, տակաւին կենդանի, թագաւորին որոշողութեանց մէջ կը յեշատակուի, երբ 1330 յունուար 31ին բարձրագոյն ատենին առջև՝ նշանակուեցաւ Մարիամ Պուրպոնի պաշտատականը : — Ալիժ մայր է Յակովբայ տ'իպլէն, իշխանի Գալիլիոյ, տիրոջ Տիբերիոյ, որ հեղինակ կը համարուի Դաւաւաւանագրոց համաւատարեան :

10. Ելլիզ, քաղառնի Հայաւառաւելի, կին Թորոսի Գ², թագաւորեալ յամին

2 Մ. Թարգմ. Ըստ վերոյգրեալ ծանօթութեան Ելլիզ ոչ ընդ Թորոսի Գ, այլ ուրիշ հետ պատկուած է :

1294 (սպանեալ իր Սմբատ եղբորէն յամին 1299) մայր Լևոնի Գ, թագաւորեալ յամին 1305, սպանեալ յամին 1307, որ կին առաւ իր մօրաքեռ գուստրը Ազնէս Լուսինեան գուստր Ամաւրեայ իշխանին Տիւրոսի: Ելլիլզ յամին 1310 ՚ի Նիկոսիա էր մօրը հետ, եղբօր Հենրիկոս Բ արքային սենեակը, երբ յափշտակուեցաւ եղբայրը և դաւաճաններէն Հայաստան զրկուեցաւ: Ելլիլզ 1324ին տակուին կ'ապրէր երբ մեռաւ Հենրիկոս Բ եղբայրը և Հիւկոս Գ եղբորդին գահը ամբարձաւ, որ երկու հօրաբոյրներ միայն ունէր՝ Ալիծ և Ելլիլզ:

11. Իզապել քաղաւի Հայաստանի, առաջին կին Օշնի Հայոց արքային, մայր Լևոնի Ե, վախճանեալ յամին 1310 ըստ տարեգրութեան Սմբատայ: Կան զանազան վկայութիւնք որոնք կը հաստատեն որ թագուհին իզապել քոյր էր Ամաւրեայ Լուսինեան, իշխանին Տիւրոսի սպանեալ յամին 1310:

1284. ԹՈՎԶԱՆԷՍ Ա ԼՈՒՍՒՆԵԱՆ, թագաւոր կիպրոսի և Երուսաղէմի, անգլանիկ որդի Հիւկոսի Գ Անտիոքայ - Լուսինեան և իզապելի տ'իպըլէն, յաջորդեց իւր հօրը 1284ին, և մեռաւ 1285ին մայիս 20:

1285. ՀԵՆՐԻԿՈՍ Բ ԼՈՒՍՒՆԵԱՆ, թագաւոր Երուսաղէմի և կիպրոսի. երրորդ որդի Հիւկոսի Գ և իզապելի տ'իպըլէն, ծնեալ յամին 1271: Հենրիկոս Բ մարմնով հիւանդոտ և տկար, մեռաւ անզաւակ 53 տարուան, 1324ին, մարտ 30 կամ 31ին ուրբաթ գիշերը: Թաղուեցաւ ՚ի Ս. Փրանկիսկոս Նիկոսիոյ, առաջ խորանին քով:

Կին յամին 1317, Գոնսղանցա Արակոնի, գուստր փրեզերիկոսի Բ Արակոնի, թագաւորին Սիկիլիոյ: Գոնսղանցա՝ կիպրոս գալու համար՝ Սիկիլիայէն նաւ մտաւ 1317ին սեպտեմբեր ամսոյն սկիզբները: Հաւանական վրկայութիւնք կան՝ որ Գոնսղանցա Արակոնի՝ իւր ամուսնոյն մեռած ժամաւ,

նակ տակուին կոյս էր: — Այլի մնալով թողուց կիպրոս կղզին 1326ին ըստ Ամատիի: Իրեն հետ կրկին ամուսնութեան համար վեց առաջարկութիւնք ելան:

1. Ընդ Հիւմֆրուայի Բ տը Մոնֆոր, տէր Պէյրուսի, գունդստապլ կիպրոսի, թոռն Հենրիկոսի Գ, որ մեռաւ յամին 1326 յունիս 24:

2. Ընդ Ալփոնսոսի ԺԱ, արքայ Գասզիլիոյ, որ 1328ին ամուսնացաւ տակուին 13ամեայ, Բորդուգալի թագաւորին դստեր հետ:

3. Ընդ Եղուարդայ, անդրանիկ որդի և յաջորդ Եղուարդայ Գ թագաւորին Անգղիոյ, յամին 1327:

4. Ընդ Ռոպերդի Անժուի - Տարենտոնի, անդրանիկ որդի ֆիլիպպոսի Տարենտացոյ, իշխանին Աքայիոյ, կայսր անուանեալ Կ. Պօլսոյ. որ յամին 1347 կին առաւ զՄարիամ Պուրպոնի, այլի կիի Լուսինեան՝ իշխանին Գալիլիոյ:

5. Ընդ կոմսն Ռիպակորասայ և Ամփուրիասայ, որ էր որդի Յակովբայ Բ Արակոնի թագաւորին:

6. Ընդ կարորոսի տ'իպրէօ, եղբայր թագուհւոյն Գաղղիոյ:

Սակայն վերջապէս ամուսնացաւ յամին 1331 Հայաստանի թագաւորին Լևոնի Ե հետ, որ մեռաւ անզաւակ 1342ին: Գոնսղանցա մեծ օժիտ բերեր էր, արծաթեղէնք, ակունք և անբաւ կարաւ սիք:

1324. ՀԻՒԿՈՍ Գ ԼՈՒՍՒՆԵԱՆ, թագաւոր Երուսաղէմի և կիպրոսի, որդի կիի՝ հինգերորդ որդի Հիւկոսի Գ և Էլիվի տ'իպըլէն, ծնեալ յամին 1299 կամ 1300, որովհետև իւր հօրը մեռած ժամանակ յամին 1302 կամ 1303 ինքը երեքամեայ էր, սնեալ և աճեցեալ իւր հօրեղբօր Հենրիկոս Բ քով, որ զինքը իբրև որդի կը սիրէր: Յամին 1318 կամ 1319 կիպրոսի գունդըստապլ եղաւ և կամ հաւանականաբար 1316 իւր Գամէրին եղբորը մահուանէն վերջը, որովհետև այս միջոցիս արդէն յարբունս հասեալ էր:

Յայտագրեց 'ի գահ իւր հօրեցորդ Հեն-
րիկոսի Բ յամին 1324 և 1359ին մեռաւ
հոկտեմբեր 10:

Առաջին կիև, Մարիամ տ'իպրլէն,
որ մեռաւ անղաւակ ամուսնութենէն
քիչ վերջը:

Երկրորդ կիև, յամին 1318 սեպ-
տեմբեր 17, Ալիծ տ'իպրլէն, զուտոր
կիի տ'իպրլէն, տէր Դոնկիև Նիկոսիոյ,
թոռն կիի Ա գունդատապլին կիպրոսի,
հինգերորդ որդի Առագ տեառն Պէյ-
րութի:—Յամին 1359, թագուհին Ա-
լիծ տ'իպրլէն այրի մնալով, նորէն ա-
մուսնացաւ ընդ ֆիլիպպոսի Պրուս-
վիք—կրիւպէնհակէն, որ էր որդի Հեն-
րիկոսի կոչեցելոյ Յոյն, (որդի Հեն-
րիկոսի Ա կոչեցելոյ Չարմանախի), զոր
իւր աները Պետրոս Ա լուսինեան գուն-
դըստապլ (և ոչ սենեսլալ) կարգեց
Երուսաղեմի յամին 1360, իւր թա-
գաւոր Երուսաղեմի պատկանն օրն 'ի
Ֆամակոսդա: ֆիլիպպոս Պրուսովիքի
հաստատուեցաւ 'ի կիպրոս և մասնակից
գտնուեցաւ Պետրոս թագաւորին ար-
շաւաններուն: Մեռաւ 1369ին օգոստոս
4ին և թագուեցաւ 'ի Ս. Դոմենիկոս
Նիկոսիոյ:— Առաջին ամուսնութենէն
ունեցեր էր զուտոր մի՝ Ելչիզ Պրուս-
վիքի, որ ամուսնացաւ այս գործոց միջոց
Պետրոս թագաւորին եղբոր, Յակոբ իշ-
խանին հետ, գունդատապլ կիպրոսի,
որ և յետ իր եղբորորդոյն Պետրոսի Բ
մահուան՝ թագաւոր եղաւ կիպրոսի:
— ֆիլիպպոս համարիւն եղբայր էր Ա-
թոնի Պրուսովիք—Կրիւպէնհակէնի, կո-
չեցեալ Տարենտայի, զոր Գրիգոր Թ
յամին 1372 կ'ուզէր ամուսնացընել
ընդ Մարեմայ Հայոց թագուհւոյն: « Ա-
թոն, կ'ըսէ քահանայապետն, 'ի կայսե-
րական սերնդոց Ոթոնաց Սաքսոնիոյ,
համարիւն արքայից կիպրոսի, և եղբայր
Ոթոնի ամուսնացելոյ ընդ մօր Պետրո-
սի մեծայշխատակ արքային կիպրոսի »:
որ յամին 1376 կ'ին առաւ զՅովհաննա,
թագուհի Նէսապօլոյ:

Ալիծ թագուհին երկարակեաց և
ղաւ քան զիւր երկրորդ ամուսինը: Յա-
մին 1366 մեր յիշատակարանաց մէջ,

իշխանուհիս կը յիշուի տակաւին. ուր
նախնի քաղաւնի բառերը, կը ցուցը-
նեն սր զեռ ողջ էր: Կ'այրէր տակա-
ւին 1385ին և 1386ին առ թագաւո-
րութեամբ Յակովբայ Ա իւր որդւոյն,
սր ճննովայէն գալով թագաւոր պա-
կուեր էր: իւր առջի ամուսնէն, Հիւ-
կուսէ Դ, ինն որդի ունեցեր էր, վեց ուս-
տըր և երեք զուտոր (զորս միագումար
կը դնենք հօս, նախ քան զմանրապա-
տում յիշենիս իրենց վերաբերեալը) -
որք էին. 1. Կի, իշխան Գալիլիոյ. 2.
Պետրոս Ա, կոմս Տրապօլոյ, թագաւոր
կիպրոսի. 3. Յովհաննէս, իշխան Ան-
տիոքայ. 4. Յակովբ Ա, գունդատապլ
Երուսաղեմի, թագաւոր կիպրոսի. 5.
Թովմաս. 6. Անանուհ. 7. Մարիամ, որ
թուի անդրանիկ 'ի դատերս. 8. Էլչիվ-
և 9. Իգապել:

Որդիք, կի, ըստ ոմանց իտալացի
ժամանակագրաց՝ Ժողէն, իշխան Գա-
լիլիոյ, գունդատապլ կիպրոսի, ան-
դրանիկ որդի Հիւկուսի Դ և Ալիծի
տ'իպրլէն: Յամին 1328 արքայն Հիւ-
կոս Դ, իւր հայրը, գեսպանութիւն մը
ղրկեց 'ի Գաղղիս, որպէս զի իր ամու-
սնութիւնը գաշնադրեն ընդ դատեր գըք-
սին Պուրպոնի կի մեռաւ իւր հօրը կեն-
դանութեան ժամանակ յամին 1346,
թողով որդի մը միայն Հիւկոս, որ յե-
տոյ թագին համար կուուեցաւ իր Պե-
տրոս Ա հօրեցորդը հետ:

Կիև կիի Լուսինեան, իշխանիև Գա-
լիլիոյ, յամին 1329 և 1330, Մարիամ
Պուրպոնի, զուտոր Լուդովիկոսի Ա,
դքսին Պուրպոնի, Նշանտուքի դաշինք-
ները գրուեցան և կնքեցան 'ի զգեկին
Պուրպոնի 1329ին 'ի 29 նոյեմբերի:
Մարիամ Պուրպոն՝ Էկ Մորդէ մեկնե-
լով ճննովայի նաւերով, որոց կը հրա-
մայէր Սատոք Տորիս, 1330ին յու-
նուար ամսոյն հասաւ 'ի Ֆամակոսդա:
Իր նշանտուքի դաշինքները և իւր ա-
մուսնութեան պայմանքը հաստատուե-
ցան 'ի Նիկոսիա 1330ին 14 յունուա-
րի և ամուսնութիւնը կատարուեցաւ
նոյն ամսոյն 31ին կամ քիչ օր վերջը:
— Յամին 1346 այրի մնալով, և մեկ մի-

այն որդի մ'ունենալով Հիւկոս, ուրուն վրայ յետոյ պիտի խօսինք, Մարիամ տը Պուրպոն 1347ին սեպտեմբեր 9ին նորէն ամուսնացաւ 'ի Նէապօլիս ընդ Ռոպէրի Անժու — Տարենտոնի, իշխանին Աքքեայ, կոչեցեալ կայսր Կ. Պօլսոյ, զոր 1325 ին ուզոյր էին ամուսնացընել ընդ այրուոյն Հենրիկոսի Բ արքայի Լուսինեան: — Յամին 1368 նուրէն այրի մնալով և 'ի Հոովմ գրտնուելով իր Հիւկոս որդւոյն հետ, իւր աներոջ՝ Պետրոս Ա Լուսինեանի հետ դաշինք մը հաստատեց իւր պաշտատականաց վճարման վերաբերեալ: — Յամին 1383 ընդունեցաւ 'ի Կաէդա իւր աները Յակոբ Ա, որ շենովայէն կուգար 'ի Կիպրոս թագաւորելու՝ վախճանեալ Պետրոս Բ թոռանը տեղ:

Յամին 1387, կորսնցունելով միակ որդին Հիւկոս Լուսինեան իշխան Գաւ

լիլիոյ; առեանակալ Հոովմայ, կտակն ըրաւ 'ի Նէապօլիս ընդ մէջ փետրուար և ապրիլ ամսոց, իբրև կայսրուհի Կ. Պօլսոյ, և ընդհանուր կտակակատար անուանեց զԼուդովիկոս Բ Պուրպոնեան, մեծ սենեկապան Գաղղիոյ, իւր եղբորորդին, որ յետոյ Կիպրոսի թագին համար պիտի կուուէր իր հօրեղբորը հետ որ էր Յակոբ Ա Լուսինեան: Մարիամ Պուրպոնեան բազմակեաց իննելով քան զիւր ամուսինները և տըղաքը, մեռաւ 'ի Նէապօլիս, ինչպէս կը կարծուի, իւր կտակին տարին: Եթէ իր վերջին կամաց նայած ըլլան, պէտք է որ թաղուած ըլլայ 'ի Ս. Գլարա և ոչ 'ի Ս. Մարիամ Նորն: Ի զուր իւր գերեզմանը փնտոցելի այս երկու եկեղեցեաց մէջ ալ: Կ'ամփոփեմ հետեւեալ թուոյն մէջ, ինչ որ կը գիտցուի նաև իր որդւոյն վրայ:

Կը շարունակուի:

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՊՍՏՄՈՒԹԻՒՆ ԺՍՄԱՆԱԿԱԿԵԾ

ՄԱՍՆ Ա. — 1814—1848:

Ա. 2 Գ

Պատմական ուսմանց յառաջագնծութիւնը և բազմաթիւ անձանց փափագը, իբրայսոս եղան մեզ լրացընելու Պատմութեան այն մասը որ ցարդ կը պակսէր ազգային տպագրեալ մատենոց մէջ, և որ ժամանակին մերձաւորութեան պատճառաւ ամենէն կարեւոր մասը կը կազմէ:

Այս մանաւանդ ստիպուեցանք 'ի թախանձանաց Մուրատ — Ռափայէլեան Վարժարանի երկցազոյն աշակերտաց, որոց համար նախ գրուեցաւ Պատմութիւն զաստիսական ձևով: Ե որպէս ալ լանացինք համառօտութեան շաղկէն յետորիլ, այսու հանդերձ դժուարին եղաւ մեզ 'ի սպառ մնալ այն սահմանաց մէջ, ուզելով յիշատակել անհամար դէպքերէն գոնեայ զսակաւս, զորս անկարելի էր որ լուր Պատմութիւն դարուս ոգին ըմբռնելու համար: Համարեցանք դարձնել զուսանողս և զընթերցողս այնպիսի աստիճանի մը հասած, զորս պարզ դիպաց յիշատակութեամբ չէինք կրնար գոհացընել, առանց այն դիպաց նախնական պատճառքը և հետևանքը բացայայտելու: անոր համար առաջիկայ պատմութեանս հասկացողութեան համար ամենակարևոր կը դաստիճակ նախընթաց պատմութեանց գիտութիւնը, որոց հետ կապեալ է և զօրեալ դիպաց յիշատակութեամբը:

Ժամանակակից պատմութիւնը երեք մաս

բաժնած ենք. Ա. 1814էն 1848. այն է՝ միակտեսական վարութեանց ժամանակէն մինչև այն տարին յորում ամեն ազգ յերոպէ քիչ շատ իր սահմանադրական ազատութիւնքը բուտացաւ. Բ. 1848էն մինչև 1871, կամ լաւ ևս ըսել՝ մինչև Քաղաքագիտութեան այն յեղափոխութիւնը, ուսկից վերջը զարդիական ազգեցութեան տեղ բրտահալման փոխանակեց. և Գ. մեր օրերը, զոր մեծաւ մասամբ կը կազմեն Արևելեան պատերազմուքը: Իս այս երեք մասանց ոճոյն ճարտար մը համարելու է ներկայ հրատարակեալ Ա մասը, որ նաև Ա հատորը կը կազմէ:

Կը խոստովանինք ևս այս առթիւ եթէ քանի դժուարութիւնք ընդ առաջ ելան մեզ Պատմութեան կարգը անցընելու առեմ այց դէպքերը զորս տակաւին ժամանակը բաւական չէ լուսաւորած, և մանաւանդ պատմագրաց և յիշատակարանաց և երբեմն ականատեսից տարածայնութեանց պատճառաւ: Ե որպէս ալ լանացինք խնամով իւրաքանչիւր ազգին մատենագիրք խորհրդակցիլ և շննալ անկողմուսէր մնալ, այսու հանդերձ տակաւին յիշողութեան մէջ կենդանի պահեալ պատահարաց նկատմամբ շատ դժուարին կէտ մը երեցաւ մեզ: Իւր եթէ տակաւին ուղղելի մասունք նկատուին 'ի մաս, կը յուսանք իմաստնոց ներդրմունքեան հանդիպել, խնդրելով միանգամայն լուսաւորուիլ այն մասանց վրայ:

Հ. ՄԻՆԱՍ ՆՈՒՐԻՒՄՆ